ԻՆՉՊԵ՞Ս ԿՎԵՐՋԱՆԱ ՄԵՐ ԴԱՐԸ

«ՀՈՒՅՍԻ ՃԱՌԱԳԱՅԹ»
աստվածաշնչյան դասընթաց

Դաս 4

ԻՆՉՊԵ՞Ս ԿՎԵՐՋԱՆԱ ՄԵՐ ԴԱՐԸ

Առաջին ատոմային ռումբի պայթյունը ոչ միայն հեռավոր տարածությունների վրա գետնի տատանում առաջացրեց, այլև ամբողջ աշխարհին սարսռեցրեց: Պայթյունի կուրացուցիչ փայլը և ամպրոպային որոտը աշխարհին հայտնեցին նոր, ատոմային դարաշրջանի սկզբի մասին:

Դա աստիճանական անցում չէր, ինչպես քարե դարից՝ բրոնզե դարին, կամ երկաթե դարից՝ շոգեմեքենայի և էլեկտրականության: Դա հանկարծակի, սարսափելի, ճնշող անցում էր: Հասարակածի արևածագի նման՝ այստեղ արշալույս չկար, գիշերվա խավարից հետո հանկարծակի եկավ պարզ օրը: Չնայած ուսումնասիրություններն ու փորձերը կատարվում էին շատ տարիներ, բայց առաջին պայթյունն էր, որ աշխարհին հայտնեց, թե ատոմի դարն սկսվեց:

Հետո հայտնվեցին արբանյակները, հրթիռները, լուսնագնացները, սկսվեցին թռիչքները դեպի ուղեծիր: Այնուհետև հայտնվեցին համակարգիչները, համացանցը, ձեռքի հեռախոսը և ժամանակակից քաղաքակրթության մյուս ձեռքբերումները: Մենք անսպասելիորեն հայտնվեցինք տարածքների համար մղվող պայքարի կենտրոնում: Այն, ինչ վերջերս երևակայություն էր թվում, դարձավ փաստ: Մարդու համար բացվեց էներգիայի նոր աղբյուրներ օգտագործելու հնարավորություն: Մեր առջև բացվում են տիեզերքի գաղտնիքները և անսահման հնարավորություններ գիտության բոլոր ճյուղերում: Մենք առնչվեցինք տիեզերքի գաղտնիքների հետ, բայց այդ առեղծվածները մարդկանց սրտերը վախով և սարսափով լցրեցին: Ի՞նչ կլինի հետո: Կօգտագործվե՞ն արդյոք բնության ուժերը բարու, լավի համար, թե՞ դրանք ավերածությունների և բնաջնջման համար են:

Քրիստոսը կանխատեսեց այդ ժամանակը և ասաց. «Մարդկանց սրտերը կնվաղեն վախից և այն բաների սպասելուց, որ աշխարհի վրա պիտի գան» (Ղուկաս 21.26):

Ապագան վախեցնում է մեզ: Մարդկային հանճարի նվաճում-

ները՝ մի կողմից, և էլ ավելի բորբոքվող կրքերն ու պայքարը՝ մյուս կողմից, ստիպում են մտածել, որ այդ ամենը կվերջանա սարսափելի աղետով, մարդկության լիակատար ոչնչացմամբ: Ընդունա՞կ է արդյոք մարդն իր ներկա բարոյական մակարդակով օգտագործել տիեզերքի գաղտնիքները իր բարօրության համար: Թե՞ նրա ձեռքերը դիպել են մի ուժի, որը շատ մեծ է իր համար: Գուցե մենք մոտենում ենք այն ժամանակին, երբ Աստված պետք է միջամտի և «երկիրն ապականողներին ապականի» (Հայտնություն 11.18):

Արբանյակները, որ ուղեծիր են ուղարկված, պտտվում են երկրի շուրջը մեծագույն ճշգրտությամբ և կարող են շատ օգտակար տեղեկություններ տալ տարածության մեջ նյութի վիճակի, տիեզերական ճառագայթների մասին: Նրանք կարող են աշխարհին հաղորդել մագնիսական ժապավենի վրա գրված պատգամը. «երկրի վրա խաղաղություն և մարդկանց մեջ հաճություն»: Բայց նրանց կողմից ուղարկված ազդանշանները չեն կարող ոչ մի տեղեկություն տալ այն մասին, թե ինչպես կարելի է խաղաղություն հաստատել, փոխել մարդկանց սրտերն ու բնությունը, ինչպես նրանց դարձնել բարի, ներողամիտ, հարմարվող:

Այստեղ տեղին է Վերներ Վան Բրաունի՝ տիեզերական թռիչքների փորձագետի խոսքերը: Նա ասում է. «Մարդիկ կարծում են, թե երկիրը շատ հուսալի և հաճելի տեղ է բնակության համար, իսկ տիեզերքում շրջակայքը թշնամի է: Բայց դա այնքան էլ ճիշտ չէ: Ճիշտ է, երկիրը պաշտպանված է մթնոլորտի շերտով, բայց, համենայն դեպս, այն անբարեկարգ անհուսալի տեղ է: Այն լի է քամիներով ու փոթորիկներով, մառախուղներով ու սառույցներով, երկրաշարժերով: Նա լի է նաև մարդկանցով, ովքեր ունեն ջերմամիջուկային, ատոմային, քիմիական և այլ զենքեր: Իսկ տիեզերքում գեղեցկություն ու կարգուկանոն է: Այնտեղ եղանակի փոփոխություն չկա, այլ տիրում է լիակատար համաչափություն, այնտեղ ամեն ինչ հուսալի է, ավելի ճշգրիտ, քան ժամացույցը: Տիեզերքում ամեն ինչ ենթարկվում է ֆիզիկայի օրենքներին»:

Տարօրինակ չէ՞, որ ամբողջ անվերջ-անեզր տիեզերքում, ուր ամեն ինչ ենթարկվում է Արարչի օրենքներին, միայն մարդն է, որ չի ցանկանում հնազանդվել դրանց: Աստծո բոլոր օրենքները միանգամայն հուսալի են, նրանց կարելի է վստահել: Բայց մեր մոլորակի վրա իշխում են անկարգությունը, խառնաշփոթությունը, հակասությունները և քայքայումը, որովհետև մարդը դադարել է հնազանդվել Արարչի օրենքներին: Եվ դրությունը չի լավանում, այլ, հակառակը, վատանում է յուրաքանչյուր սերնդի հետ: Որոշ տնտեսագետներ կարծում են, թե մեր երկրագունդը այնքան է ավերված, որ անհրաժեշտ է փնտրել բնակության ուրիշ վայր մեր մոլորակից դուրս, ուրիշ աշ-

խարհների վրա: Եթե աշխարհին իրականում ոչնչացում է սպառնում, ապա միանգամայն խելացի կլիներ հեռանալ այստեղից մի այլ՝ ավելի հուսալի տեղ:

Ի՞նչ է ասում այդ մասին Աստծո Գիրքը՝ Աստվածաշունչը: Ինչո՞վ կվերջանա մեր ատոմի, տիեզերական թռիչքների և տեղեկատվության դարը: Հնարավո՞ր է արդյոք, որ մարդիկ բոլորովին թողնեն երկիրը և գնան ուրիշ, ավելի լավ տեղ: Մտնո՞ւմ է արդյոք դա, ընդհանուր առմամբ, երկրի և մարդկության համար Աստծո ծրագրի մեջ: Աստծո Խոսքն ասում է, որ երկրից հեռանալու հնարավորությունը միանգամայն իրական է: Ինքը՝ Հիսուսը, փորձով ցույց տվեց, որ դա հնարավոր է և Իր հետևորդներին խոստացավ իսկական զանգվածային թռիչք դեպի տիեզերք: Մի անգամ Նա կանգնած էր Ձիթենյաց սարի վրա՝ աշակերտներով շրջապատված: Հանկարծ նրա ոտքերը պոկվեցին երկրից, ձգողության օրենքը դադարեց գործել, և փառաց Տերը համբարձվեց երկինք: Տե՛ս Գործք առաքելոց 1.9: Նա խոստացավ. «Գնում եմ ձեզ համար տեղ պատրաստելու, և եթե գնամ և ձեզ համար տեղ պատրաստեմ, դարձյալ կգամ և ձեզ Ինձ մոտ կառնեմ, որ ուր Ես եմ, դուք էլ լինեք» (Հովհաննես 14.2,3):

Այսպիսով, մեզ հնարավորություն կընձեռվի հեռանալ երկրից և այն էլ ոչ թե մի քանի ժամով կամ օրով, այլ շատ դարերով վերաբնակվել այնտեղ, ուր մեր Փրկիչն է, այն հրաշալի մոլորակի վրա, որը Աստծո Խոսքում կոչվում է Երկինք: Պողոս առաքյալը այդ իրադարձությունը նկարագրում է հետևյալ խոսքերով. «Որովհետև Ինքը Տերը հրամանով, հրեշտակապետի ձայնով և Աստծո փողով վայր կգա երկնքից, և Քրիստոսով մեռելները առաջ հարություն կառնեն: Եվ հետո մենք, որ կենդանի ենք մնացած, նրանց հետ մեկտեղ ամպերով օդի մեջ կհափշտակվենք՝ Տիրոջը դիմավորելու, և այնպես ամեն ժամանակ Տիրոջ հետ կլինենք» (Ա Թեսաղոնիկեցիս 4.15,16):

Կարելի՞ է արդյոք պատկերացնել ավելի վեհասքանչ և փառավոր իրադարձություն: Փրկիչը մոտենում է երկրին, և երկրի բոլոր բնակիչները կարող են տեսնել նրան: Հայտնություն 1.7: Նա հարություն կտա մեռելներին՝ անողոք մահվան ձեռքով խլված մեր սիրելիներին: Նրանց հետ միասին մենք օդ կբարձրանանք՝ Տիրոջը դիմավորելու, իսկ հետո Նա Ինքը մեզ կուղեկցի դեպի մեր բնակության նոր վայրը՝ երկնային Արքայի քաղաքը:

Այդ ժամանակին մենք մոտենում ենք հսկայական քայլերով: Դուք կարող եք հարցնել. «Ինչի՞ հիման վրա կարելի է այդ մասին խոսել այդպիսի վստահությամբ»: Հիշենք Դանիելի մարգարեությունն այն մասին, որ աշխարհի պատմության վերջին օրերին «գիտությունը պիտի շատանա» (Դանիել 12.4): Գիտելիքները, ինչպես կրոնի, այնպես էլ գիտության բոլոր բնագավառներում, այնքան

են աճել վերջին տարիներին, որ դա ապացույցներ չի պահանջում: Խորհենք միայն ժամանակակից փոխադրամիջոցների մասին: 16-րդ դարում Մագելանի շուրջերկրյա ճանապարհորդությունը կատարելու համար պահանջվեց մի քանի տարի: Այսօր երկրագնդի շուրջը պտույտ գործելու համար րոպեներ են պահանջվում:

Աստված այս գիտելիքները անցած դարերում չտվեց: Նա չէր կարող մարդուն վստահել տիեզերքի այդպիսի մեծագույն գաղտնիքները ժամանակից շուտ, որպեսզի մարդը ինքն իրեն չոչընչացնի: Աստված պահեց այդ հայտնագործությունները մինչև «վերջին ժամանակը», երբ Նրա ծրագիրը երկրի և նրա բնակիչների համար ի կատար կածվի:

Կարո՞ղ է արդյոք մարդն իր չլուծված խնդիրներով, մերձավորների նկատմամբ ունեցած իր թշնամությամբ ու ատելությամբ, մահացու հիվանդությամբ, մեղքով վարակված, նվաճել ուրիշ՝ լավագույն, անմեղ աշխարհներ: Դա կթույլատրի՞ արդյոք Աստված: Նա երկիրը մեկուսացրեց բնակեցված այլ աշխարհներից, որպեսզի մեղքի վարակը չտարածվի այլ աշխարհներում: Նա հաղորդակցությունը, կապը մյուս բնակեցված աշխարհների հետ անհնարին դարձրեց: Հեռավորությունները այդ մոլորակների միջև այնքան մեծ են, որ կպահանջվի ավելին, քան մարդու ամբողջ կյանքը, որպեսզի նա հասնի մի մոլորակի, որի վրա պայմանները կյանքի համար ավելի լավն են: Դրա համար այդպիսի արշավները կմնան երազանք, քանի դեռ չի ոչնչացել մեղքը, իսկ նրա հետ՝ և մահը:

Երկրից հեռանալու միակ տարբերակը Աստծո առաջարկած տարբերակն է: Տերը կոչնչացնի մահը և այդպիսով միջմոլորակային արշավախմբի մասնակիցներին կպատրաստի տիեզերքում թռիչքի: Քրիստոսն ասում է. «Մի՛ վախենա, ես եմ Առաջինը և Վերջինը, և կենդանին և ունեմ դժոխքի և մահի բանալիները» (Հայտնություն 1.17,18): Նրա գալստյան «ժամանակ կլինի այն խոսքը, որ գրված է, թե մահն ընկղմվեց հաղթության մեջ» (Ա Կորնթացիս 15.54):

Ինչպիսի՞ն են Աստծո ծրագրերը մեր երկրի վրա և նրա բնակիչների վերաբերյալ: Ի՞նչ է ասվում Աստծո Խոսքում այն իրադարձության մասին, որն ըն-

դունված է անվանել «աշխարհի վերջ»: Կլինի՞ արդյոք այդպիսի իրադարձություն:

Քրիստոսը դրան դրական պատասխան է տալիս: Նա համեմատում է այդ իրադարձությունը հունձքի հետ. «Հունձքն աշխարհի վերջն է» (Մատթեոս 13.39):

Փրկիչը համբարձվեց երկինք լուսավոր ամպի վրա: Հրեշտակները աշակերտներին ասացին, որ Նա կվերադառնա «այնպես, ինչպես նրան տեսաք երկինք գնալիս» (Գործք առաքելոց 1.11): Հովհաննես առաքյալին տեսիլքի մեջ ցույց տրվեց Քրիստոսի վերադարձը: «Եվ տեսա, և ահա մի սպիտակ ամպ, և ամպի վրա մեկը նստած մարդու Որդու նման, որ Իր գլխի վրա ոսկի պսակ, և իր ձեռքում սուր գերանդի ուներ: Եվ մի ուրիշ հրեշտակ դուրս եկավ տաճարից, որ մեծ ձայնով աղաղակում էր ամպի վրա նստողին. ուղարկիր քո գերանդին և հնձիր, որովհետև քո ժամանակը եկավ հնձելու, որ երկրի հունձքը հասել է» (Հայտնություն 14.14,15):

Քրիստոսի գալստյան հետ կապված՝ երկրի վրա մեծ փոփոխություններ կկատարվեն: «Տիրոջ օրը գիշերվա գողի պես կգա, որ նրանում երկինքը շառաչյունով կանցնի, և տարերքը կրակով վառված կհալվեն, և երկիրը և նրանում եղած բաներն էլ կայրվեն: Հիմա որ սրանք ամենը հալվելու բաներ են. ինչպես պետք է դուք գտնվեք սուրբ և աստվածապաշտ վարքում: Սպասելով և արտորալով Տիրոջ գալստյան օրին հասնել, որ նրանում երկինքները կրակով այրված կլուծվեն, և տարերքը կրակ ընկած կհալվեն»



(Բ Պետրոս 3.10-12):

Հարյուր տարի առաջ այս խոսքերը շատերի մոտ կասկածանքի ժպիտ էին առաջացնում: Ինչպե՞ս կարող են տարերքը, այսինքն՝ տարրերը քայքայվել, հալվել, և երկիրը՝ այրվել: Բայց այն ժամանակից ի վեր, երբ ատոմի ճեղքումը փաստ դարձավ, այս խոսքերն այլևս կասկածանքի ժպիտ չեն առաջացնում: Մեր սերունդը ապրում է քաղաքակրթության և մարդկության ոչնչացման հնարավորության մշտական վտանգի տակ: Բայց նկատենք, որ Սուրբ Գրքի համաձայն՝ «աշխարհի վերջը» կգա ոչ թե ատոմային պայթյունի հետևանքով, այլ ցանկացած պատկերացում գերազանցող Տիրոջ փառքից: «Ու թե ճեղքեիր երկինքը, վայր իջնեիր, քո առաջը սարերը պիտի հալվեին, ինչպես կրակով վառվում է խռիվը, և ջուրը՝ եփում կրակով» (Եսայիա 64.1,2): «Եվ այն ժամանակ կհայտնվի այն անօրենը, որին

Տերը կսատակեցնի իր բերանի հոգով և կխափանի իր գալստյան հայտնությունով» (Բ Թեսաղոնիկեցիս 2.8):

Ավետարանում Քրիստոսի գալուստը նկարագրված է հետևյալ խոսքերով. «Եվ այն ժամանակ կերևա մարդու Որդու նշանը երկնքում, և այն ժամանակ կոծ կանեն երկրի բոլոր ազգերը և կտեսնեն մարդի Որդուն գալիս երկնքի ամպերի վրա զորությունով և շատ փառքով: Եվ Նա կուղարկի Իր հրեշտակները մեծաձայն փողով, և նրանք կժողովեն նրա ընտրվածներին չորս հողմից՝ երկնքի ծայրերից մինչև նրա մյուս ծայրերը» (Մատթեոս 24.30,31):

Այս խոսքերից երևում է, որ Քրիստոսի գալստյան ժամանակ երկրագնդի ամբողջ բնակչությունը պետք է բաժանվի երկու դասակարգի: Ոմանք «լաց կլինեն» Նրա առաջին, նրանք պատրաստ չեն լինի Նրա հայտնությանը և չեն դիմանա այդ փառքին: Նրանց մեղավոր մարմինները հարմարված չեն ապրելու Աստծո ներկայությամբ: Մյուսները կուրախանան Նրա գալուստով, և Աստծո հրեշտակները կհավաքեն նրանց «երկնքի ծայրերից մինչև նրա մյուս ծայրերը»: Նրանք պետք է ամպերով օդի մեջ հափշտակվեն՝ Տիրոջը դիմավորելու: Այդ մարդիկ ճակատագրական այդ օրվա ամբողջ սարսափը չեն ապրի: Նրանք այդ ժամանակ իրենց Տիրոջ հետ միասին կլինեն դեպի լավագույն աշխարհը տանող ճանապարհին:

Ովքե՞ր են այդ մարդիկ, որ կխուսափեն աղետից: Այդ նրանք են, որ հավատում են իրենց Փրկչի խոստմանը, թե Նա նորից կգա, և սպասում են այդ օրվան. երբ Նա իր խոստման համաձայն կգա և նրանց կվերցնի Իր մոտ: Որպեսզի մասնակցեն այդ միջմոլորակային թռիչքին, նրանց կտրվեն նոր, անմահ մարմիններ: Այդ մասին գրված է Փիլիպպեցիս թղթի 3.20 և 21-ում. «Մեր քաղաքականությունը երկնքումն է, որ այնտեղից սպասում ենք Փրկչին՝ Տեր Հիսուս Քրիստոսին, որ կնորոգի մեր խոնարհ մարմինը, որ Իր փառավոր մարմնին կերպարանակից լինի այն զորությունով, որ կարող է ամեն բան հնազանդեցնել իրեն»:

Քրիստոսի գալուստը ոչ միայն ամենից արտասովոր տեսարանն է լինելու, որ երբևէ տեսել է աշխարհը, այլև ամենից կարևոր իրադարձությունը մեր մոլորակի պատմության մեջ: «Երկինքները կրակով այրված կլուծվեն, և տարերքը կրակ ընկած կհալվեն» (Բ Պետրոս 3.12): Սրանով վերջանում է մարդկային կրքերի պայքարի տխուր պատմությունը: Սրանով վերջանում է ատոմի ու տեղեկատվության դարը, և սկսվում է նոր դարաշրջան:

Հաջորդ համարում մենք կարդում ենք. «Բայց նրա խոստմունքի պես նոր երկնքի և նոր երկրի ենք սպասում, որոնցում արադարություն է բնակվում»:

Աստված խոստանում է ստեղծել ամեն ինչ նոր՝ նոր երկիր և նոր մթնոլորտ նրա շուրջը: Հովհաննեսը Հայտնություն 21.1-4-ում

գրում է. «Եվ տեսա նոր երկինք և նոր երկիր, որովհետև առաջի երկինքը և երկիրը անցավ, և էլ ծով չկար: Եվ ես՝ Հովհաննես, տեսա սուրբ քաղաքը՝ Նոր Երուսաղեմը՝ վայր գալիս Աստծուց երկնքից, պատրաստված ինչպես մի զարդարված հարս իր մարդի համար: Եվ մի մեծ ձայն լսեցի երկնքից, որ ասում էր. Ահա Աստծո խորանը մարդկանց հետ, և նա կբնակվի նրանց հետ, և նրանք կլինեն նրան ժողովուրդ, և ինքն Աստված նրանց հետ կլինի նրանց Աստված: Եվ կջնջի Աստված բոլոր արտասուքը նրանց աչքերից, և մահն այլևս չի լինի, ոչ սուգ և ոչ աղաղակ, և ոչ ցավ այլևս չի լինի, որովհետև առաջիններն անցան»:

Բոլորն, ինչ որ փչացել և աղավաղվել էր մեղքից, կանհետանա: Երկիրը կմաքրվի կրակով, և ամեն ինչ նոր կլինի: «Այն ժողովուրդը, որ բնակվում է այնտեղ, նրա անօրենությունը թողնված է» (Եսայիա 33.24):

Կլինե՞նք արդյոք մենք՝ դուք և ես, այդ ժողովրդի մեջ, որի մեղքերը ներված են: Քրիստոսն այսօր է պատրաստում լավագույն աշխարհի հպատակներին իր հավիտենական թագավորության համար: Նա այսօր կանչում է մեղավորներին և տալիս է մեղքերի ներում: Ընդունե՞լ եք դուք նրա հրավերը:

Հավիտյան չէ գիշերվա քողի տակ
Պահվել արևի պարզ ճառագայթը,
Կծագի արև ջինջ երկնքի տակ,
Երբ քնից հետո բացվեն աչքերը:

Միշտ չէ աշխարհում նեղվածք լինելու
Լուսավոր մտքի, բարության համար,
Տերը իր որդկանց չի մոռանալու՝
Չարի ճանկերից փրկելու համար:

Արդ մոտ է ժամը մեր ազատության,
Մեղքի գիշերը ընդմիշտ պիտ անցնի,
Եվ արեգակը մեր արդարության
Աշխարհի վրա ընդմիշտ պիտ ծագի:

Եվ նոր կլինի ամենն աշխարհում
Ու չի կրկնվի մեղքը նորից սին:
Աղոթի՛ր, ջանա՛ և պատրա՛ստ եղիր
Դիմավորելու Քրիստոս Հիսուսին: